

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Զարկային և մաքսային օրենսդրության նորություններ 2

1.1 ԶՅ օրենքներ -----	2
1.2 ԶՅ կառավարության որոշումներ -----	14
1.3 Պաշտոնական պարզաբանումներ, հրահանգներ-----	16

2. Զարկային (ԶՅ ԿԱ ՊԵԿ գործունեությանն առնչվող) օրենսդրության նշանակալի փոփոխություններ 18

3. Զարկային և մաքսային վարչարարության ներքին դրվագներ 21

3.1 Ակնարկ գանգատարկումների և ծառայողական քննությունների -----	21
3.2 Միջազգային համագործակցություն -----	22
3.3 Ոխուցում, մրցույթ -----	22
3.4 ԶՅ ԿԱ ՊԵԿ կողմից վերահսկվող եկամուտների վերաբերյալ տվյալներ -----	23
3.5 Զարկային և մաքսային վարչարարության վերաբերյալ վիճակագրական տվյալներ-----	24

1. ԶԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1 ԶՅ Օրենքներ

Փաստաթուղթ	«Ծխախոտի արտադրանքի համար հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	17 դեկտեմբերի 2011թ, ՀՕ-279-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 69 (872), 21.12.2011թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից

Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված փոփոխություններով ուժը կորցրած են ճանաչվում «Ծխախոտի արտադրանքի համար հաստատագրված վճարների մասին» ՀՀ 2000 թվականի մարտի 24-ի ՀՕ-40 օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը, որոնցով սահմանվում էին, որ ՀՀ ներմուծվող ծխախոտի արտադրանքի համար հաստատագրված վճարի ընդհանուր գումարի մեջ

ավելացված արժեքի հարկի հաշվարկային մեծությունն ընդունվում է 15 տոկոս, իսկ մաքսատուրքի հաշվարկային մեծությունը՝ 8.5 տոկոս (մաս 2), Հանրապետությունում արտադրվող ծխախոտի արտադրանքի համար հաստատագրված վճարի ընդհանուր գումարի մեջ ավելացված արժեքի հարկի հաշվարկային մեծությունն ընդունվում է 20 տոկոս (մաս 3):

Փաստաթուղթ	«Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	17 դեկտեմբերի 2011թ, ՀՕ-284-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 69 (872), 21.12.2011թ.
Ուժի մեջ է	2012 թվականի հունվարի 1-ից

Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված փոփոխությամբ սահմանվում է, որ բնօգտագործման վճար է համարվում պետական սեփականություն համարվող բնական պաշարների արդյունավետ, համալիր օգտագործման, ինչպես նաև բնական պաշարների օգտագործումը փոխհատուցելու նպատակով այդ պաշարների օգտագործման և (կամ) իրացման համար վերոնշյալ օրենքին համապատասխան ՀՀ պետական բյուջե վճարվող վճարը:

Սահմանվում է ոչ մետաղական պինդ օգտակար հանածոների (բացառությամբ աղի) և ՀՀ կառավարության կողմից սահմանված գունազեղ քարերի տեսակների մարված պաշարների համար բնօգտագործման վճարների հաշվարկման կարգը:

Օրենքում կատարված լրացմամբ սահմանվում է բնօգտագործման վճարի նոր տեսակ՝ ռո-



յալթին՝ որպես արդյունահանված մետաղական օգտակար հանածոների օգտագործումը փոխհատուցելու նպատակով. ինչպես նաև մետաղական օգտակար հանածոների և դրանց վերամշակման արդյունքում ստացված արտադրանքի իրացումից ստացվող բարձր շահութաբերության համար ՀՀ պետական բյուջե վճարվող վճար:

Օրենքում կատարված մեկ այլ լրացմամբ սահմանվում է նաև ռոյալթի վճարողների շրջանակը, ռոյալթիների հաշվարկման բազան, դրույքաչափերը, հաշվարկման և վճարման կարգը: Ե, որ ռոյալթիների հաշվարկման և վճարման նկատմամբ հսկողությունն իրականացնում են ՀՀ հարկային մարմինները:

Փաստաթուղթ	«Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	21 դեկտեմբերի 2011թ, ՀՕ-293-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 69 (872), 21.12.2011թ.
Ուժի մեջ է	2012 թվականի հունվարի 1-ից

Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված լրացմամբ սահմանվում է, որ հարկային գործակալները պարտավոր են ֆիզիկական անձանց պահանջով տալ հաշվարկված և վճարված եկամուտների, իրականացված նվազեցումների և պահված հարկի գումարների մասին տեղեկանքներ:

Մեկ այլ լրացմամբ սահմանվում է, որ հարկ վճարող ֆիզիկական անձինք ներկայացնում են նաև իրենց հարկային տարվա տարեկան եկամուտների մասին պարզեցված հաշվարկ: Սահմանվում է նաև, որ նախորդ հաշվետու ժամականաշրջանի համար հարկային մարմին ներկայացրած տեղեկության մեջ սխալն ինքնուրույն հայտնաբերելու դեպքում կազմա-

կերպությունը, անհատ ձեռնարկատերը կամ նոտարը ներկայացնում է ճշտված տեղեկություն, բացառությամբ այն դեպքի, երբ ճշտված տեղեկությունը վերաբերում է հարկային մարմնի կողմից ստուգվող կամ արդեն իսկ ստուգված հաշվետու ժամանակաշրջանին:

Օրենքի 37-րդ հոդվածով սահմանված անվանական տեղեկությունները իրենց հաշվառման վայրի հարկային տեսչության մարմին չներկայացնելու դեպքում կազմակերպությունը, անհատ ձեռնարկատերը կամ նոտարը վճարում է տուգանք՝ հարկային մարմին չներկայացրած յուրաքանչյուր տեղեկության համար 5000 դրամի չափով:

Փաստաթուղթ	«Հարկային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	06 հոկտեմբերի 2011թ, N 1420-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 71 (874), 28.12.2011թ.
Ուժի մեջ է	2012 թվականի հունվարի 1-ից

Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված փոփոխության համաձայն սահմանվում է, որ հարկային ծառայության մարմնի խնդիր չէ հանդիսանում ֆիզիկական անձանց եկամուտների, գույքի և ծախսերի հայտարարագրման մասին օրենսդրության պահանջների կատարման և կիրառման նկատմամբ հսկողության իրականացումը: Մեկ այլ փոփոխությամբ «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքից հանվում է հարկային մարմ-

նի՝ եկամուտներ, գույք և ծախսեր հայտարարագրող անձանց մոտ ստուգումներ անցկացնելու իրավունքը:

Սահմանվում է նաև, որ հարկային ծառայողին հարկային ծառայությունից ազատելու հիմք չէ եկամուտների հայտարարագիր չներկայացնելը, հարկային ծառայողի պարտականություն չէ օրենքով սահմանված կարգով եկամուտներ հայտարարագրելը:

Փաստաթուղթ	«Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	21 դեկտեմբերի 2011թ, ՀՕ-297-Ն
Հրատարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 71 (874), 28.12.2011թ.
Ուժի մեջ է	2012 թվականի հունվարի 1-ից

Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված փոփոխությամբ սահմանվում է, որ մաքսային ծառայողին ծառայությունից ազատելու հիմք չէ օրենքով սահմանված կարգով իր եկամուտների հայտարարագիր չներկայացնելը:

Փաստաթուղթ	«Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	21 դեկտեմբերի 2011թ, ՀՕ-299-Ն
Հրատարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 71 (874), 28.12.2011թ.
Ուժի մեջ է	2012 թվականի հունվարի 1-ից

Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված լրացմամբ սահմանվում է, որ «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի իմաստով եկամուտ չեն համարվում «Հարկերի մասին» ՀՀ օրենքի համաձայն պետական բյուջե հավաքագրվող հարկատեսակներին (բացառությամբ պետական բյուջե հավաքագրվող գույքահարկի և հողի հարկի) վերաբերող գերավճարների և (կամ) գերավճարից տարբերվող գումարների վերադարձն օրենքով սահմանված ժամկետից 90 օրվանից ավելի ուշացնելու դեպքում այդ ժամկետին հաջորդող յուրաքանչյուր ուշացած օրվա համար հարկ վճարողի օգտին հաշվեգրված տույժերը:

Օրենքում կատարված փոփոխությամբ հարկային գործակալի կողմից եկամտահարկի հաշվարկման դրույքաչափեր են սահմանվում՝

ամսական հարկվող եկամուտը՝ մինչև 80.000 դրամ՝ հարկվող եկամտի 10 տոկոս, ամսական հարկվող եկամուտը՝ 80.000 մինչև 2.000.000 դրամ՝ 8.000 դրամին գումարած 80.000 դրամը գերազանցող գումարի 20 տոկոսը,

ամսական հարկվող եկամուտը՝ 2.000.000 դրամից ավելի՝ 392.000 դրամին գումարած 2.000.000 դրամը գերազանցող գումարի 25 տոկոսը:

Միաժամանակ, անհատ ձեռնարկատեր հանդիսացող ֆիզիկական անձի կողմից որպես անհատ ձեռնարկատեր գույքը վարձակալության տալուց ստացված եկամուտների նկատմամբ կիրառվում են «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված դրույքաչափերը:

Օրենքում կատարված լրացմամբ սահմանվում է, որ ՀՀ ռեզիդենտ չհամարվող կազմակերպությունները կարող են, իրենց հայեցողությամբ, հարկային մարմին ներկայացվող՝ վերադաս հարկային մարմնի հաստատած ձևով գրավոր հայտարարության հիման վրա հանդես գալ որպես հարկային գործակալ ՀՀ քաղաքացիություն ունեցող ֆիզիկական անձանց ՀՀ տարածքից դուրս վճարված եկամուտների մասով: Այս դեպքում հարկային գործակալը հաջորդ տարվա ապրիլի 15-ից ոչ ուշ հարկային մարմին է ներկայացնում հարկային մարմնի սահմանած



ձևով եկամտահարկի անվանական հաշվարկ: Օրենքում կատարված մեկ այլ փոփոխությամբ սահմանվում է, որ եկամտահարկի կանխավճարները կատարվում են նախորդ տարվա եկամտահարկի փաստացի գումարի և (կամ) եկամտահարկի հաշվարկային մեծության 18.75 տոկոսի չափով (նախկինում՝ մեկ վեցերորդ): Կանխավճարների տարեկան հանրագումարը տվյալ տարվա փաստացի եկամտահարկի 75 տոկոսից (նախկինում՝ երկու երրորդից) պակաս լինելու դեպքում հարկատուն վճարում է տույժ՝ փաստացի եկամտահարկի 18.75 տոկոսի (նախկինում՝ մեկ վեցերորդ) և տվյալ եռամսյակում փաստացի վճարված կանխավճարի տարբերության գումարի նկատմամբ: Վերոնշյալ չափով եկամտահարկի կանխավճարները 1-ին անգամ կատարվում են 2012 թվականի 1-ին եռամսյակի համար՝ հիմք ընդունելով 2011 թվականի եկամտահարկի փաստացի գումարը և (կամ) եկամտահարկի

հաշվարկային մեծությունը, եթե հարկ վճարողները 2011 թվականի տարեկան եկամուտների հաշվարկը հարկային մարմին ներկայացրել են մինչև 2012 թվականի մարտի 15-ը ներառյալ:

2011 թվականի տարեկան եկամուտների վերաբերյալ հաշվարկը 2012 թվականի մարտի 15-ից հետո ներկայացվելու դեպքում 2012 թվականի 1-ին եռամսյակի համար եկամտահարկի կանխավճարի մեծությունը որոշվում է նախորդ տարվա վերջին կանխավճարի չափից ոչ պակաս չափով:

Օրենքում կատարված լրացմամբ սահմանվում է, որ տարեկան եկամուտների մասին հաշվարկ կարող են չներկայացնել նաև այն ֆիզիկական անձինք, որոնց փոխարեն եկամտահարկի հաշվարկը օրենքով սահմանված կարգով ներկայացնում են հարկային գործակալ ճանաչված ՀՀ ռեզիդենտ չհամարվող կազմակերպությունները:

Փաստաթուղթ	«Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	21 դեկտեմբերի 2011թ, ՀՕ-300-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 71 (874), 28.12.2011թ.
Ուժի մեջ է	2012 թվականի հունվարի 1-ից

Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված փոփոխությամբ սահմանվում է, որ հսկիչ-դրամարկղային մեքենաների գրանցման կարգի և /կամ շահագործման կանոնների խախտումը, տուգանքը նշանակելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, առաջին անգամ կրկնելու դեպքում կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը տուգանվում է տվյալ գործունեության իրականացման վայրում (առևտրի օբյեկտում կամ ծառայության մատուցման վայրում) տեղադրված հսկիչ-դրամարկղային մեքենաներով նախորդ ամսվա ընթացքում արձանագրված շրջանառության երկու տոկոսի չափով, բայց ոչ պակաս երեք հարյուր հազար դրամից, իսկ երկրորդ կամ ավելի անգամ կրկնելու դեպքում՝ տվյալ գործունեության վայրում (առևտրի օբյեկտում կամ ծառայության մատուցման վայրում) տեղադրված հսկիչ-դրամարկղային մեքենաներով նախորդ ամսվա ընթացքում արձանագրված շրջանառության երկու տոկոսի չափով, բայց ոչ պակաս վեց հարյուր հազար դրամից:



Փաստաթուղթ	«Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	21 դեկտեմբերի 2011թ, ՀՕ-301-Ն
Հրատարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 71 (874), 28.12.2011թ.
Ուժի մեջ է	2012 թվականի հունվարի 1-ից

Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված լրացմամբ սահմանվում է, որ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի իմաստով եկամուտ չեն համարվում «Հարկերի մասին» ՀՀ օրենքի համաձայն պետական բյուջե հավաքագրվող հարկատեսակներին (բացառությամբ պետական բյուջե հավաքագրվող գույքահարկի և հողի հարկի) վերաբերող գերավճարների և (կամ) գերավճարից տարբերվող գումարների վերադարձն օրենքով սահմանված ժամկետից 90 օրվանից ավելի ուշացնելու դեպքում այդ ժամկետին հաջորդող յուրաքանչյուր ուշացած օրվա համար հարկ վճարողի օգտին հաշվեգրված տույժերը:

վետու տարվա արդյունքներով հարկատուի (բացառությամբ բանկերի և վարկային կազմակերպությունների) զուտ ակտիվների (հարկատուի ակտիվների և պարտավորությունների դրական տարբերության) կրկնապատիկը, իսկ բանկերի և վարկային կազմակերպությունների դեպքում՝ զուտ ակտիվների (հարկատուի ակտիվների և պարտավորությունների դրական տարբերության) իննապատիկը գերազանցող գումարը: Նշված դրույթները չեն տարածվում ՀՀ կառավարության սահմանած ցանկում ընդգրկված՝ միջազգային զարգացման կազմակերպություններից ստացված փոխառությունների դիմաց վճարման ենթա-



Օրենքում կատարված մեկ այլ լրացմամբ սահմանվում է, որ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի իմաստով ծախսերի թվին են դասվում նաև բնօգտագործման վճարները:

Սահմանվում է, որ հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամտից չեն նվազեցվում՝

- ՀՀ կառավարության սահմանած չափը գերազանցող կառավարման ծառայությունների ծախսերը:

- Բանկ և (կամ) վարկային կազմակերպություն չհամարվող սուբյեկտներից ներգրավված փոխառությունների դիմաց հաշվետու տարում վճարման ենթակա տոկոսների՝ հաշ-

կա տոկոսների, ինչպես նաև պարտքային արժեթղթերի հրապարակային տեղաբաշխման միջոցով ներգրավված միջոցների դիմաց վճարման ենթակա տոկոսների վրա:

Սահմանվում է նաև, որ հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամտից նվազեցման նպատակով հաշվետու տարվա ընթացքում միակողմանի փաստաթղթերով (կրճատ հաշիվ-ապրանքագիր, հսկիչ-դրամարկղային մեքենայի կտրոն, միակողմանի գնման ակտ) կատարված ծախսերի ընդհանուր գումարը չի կարող գերազանցել 36.0 մլն դրամը:

Կանխավճարների չափ է սահմանվում նա-

խորդ տարվա շահութահարկի փաստացի գումարի և (կամ) շահութահարկի հաշվարկային մեծության 18.75 տոկոսը: Այս չափով շահութահարկի կանխավճարները 1-ին անգամ կատարվում են 2012 թվականի 1-ին եռամսյակի համար՝ հիմք ընդունելով 2011 թվականի շահութահարկի փաստացի գումարը և (կամ) շահութահարկի հաշվարկային մեծությունը, եթե հարկ վճարողները 2011 թվականի շահութահարկի հաշվարկը հարկային մարմին ներկայացրել են մինչև 2012 թվականի մարտի 15-ը ներառյալ:

2011 թվականի շահութահարկի հաշվարկը 2012 թվականի մարտի 15-ից հետո ներկայացվելու դեպքում 2012 թվականի 1-ին եռամսյակի համար շահութահարկի կանխավճարի մե-

ծությունը որոշվում է նախորդ տարվա վերջին կանխավճարի չափից ոչ պակաս չափով:

Օրենքում կատարված մեկ այլ լրացմամբ սահմանվում է, որ հարկ վճարողների կողմից օֆշորային գոտիներում գրանցված (հաշվառված) կազմակերպություններից ապրանքների կամ հիմնական միջոցների ձեռքբերման համար այդ գոտիներում գրանցված (հաշվառված) կազմակերպություններին կատարված կանխավճարների դիմաց արդյունքը կանխավճարի կատարման օրվան հաջորդող մեկ տարվա ընթացքում չստացվելու դեպքում կատարված կանխավճարների նկատմամբ շահութահարկը հաշվարկվում է 20 տոկոս դրույքաչափով: Օֆշորային գոտիների (երկրների) ցանկը սահմանում է ՀՀ կառավարությունը:

Փաստաթուղթ	«Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	26 դեկտեմբերի 2011թ, ՀՕ-308-Ն
Հրատարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 71 (874), 28.12.2011թ.
Ուժի մեջ է	2012 թվականի հունվարի 1-ից

Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված փոփոխությամբ սահմանվում է, որ օրենքով սահմանված կարգով պետական գրանցում չունեցող (չհաշվառված) կամ հարկային մարմիններում չհաշվառված անձանց կողմից ձեռնարկատիրական գործունեությամբ (ապօրինի գործունեություն) զբաղվելու դեպքում գանձվում է տուգանք՝ այդ գործունեության արդյունքում հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված իրացման շրջանառության (համախառն եկամտի) 50 տոկոսի չափով, բայց ոչ պակաս երկու հարյուր հազար դրամից: Նշված խախտումն արձանագրելուց հետո մեկ տարվա ընթացքում խախտումը կրկնվելու դեպքում գանձվում է տուգանք՝ այդ գործունեության արդյունքում հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված իրացման շրջանառության (համախառն եկամտի) 100 տոկոսի չափով, բայց ոչ պակաս հինգ հարյուր հազար դրամից: Նշված տուգանքը ապօրինի գործունեություն իրականացնողների համար ապօրինի գործունեության մասով վերջնական հարկային պարտավորություն է:

Օրենքով սահմանված լիցենզավորման ենթակա գործունեությունն առանց լիցենզիայի

իրականացնելու կամ առանց թույլտվության կամ առանց լիցենզիայի ընդերքը կամ քնական պաշարներն օգտագործելու դեպքերում կազմակերպություններից և անհատ ձեռնարկատերերից գանձվում է տուգանք՝ լիցենզիայի կամ թույլտվության տրման համար օրենքով սահմանված պետական տուրքի դրույքաչափի տասնապատիկի չափով, բայց ոչ պակաս հինգ հարյուր հազար դրամից: Նշված խախտումն արձանագրելուց հետո մեկ տարվա ընթացքում խախտումը (անկախ լիցենզավորման կամ թույլտվության ենթակա գործունեության տեսակից) կրկնվելու դեպքում կազմակերպություններից և անհատ ձեռնարկատերերից գանձվում է տուգանք՝ լիցենզավորման կամ թույլտվության ենթակա գործունեության իրականացման լիցենզիայի տրման համար օրենքով սահմանված պետական տուրքի դրույքաչափի քսանապատիկի չափով, բայց ոչ պակաս մեկ միլիոն դրամից: Վերոնշյալ խախտումները հայտնաբերելու դեպքերում խախտումներ կատարած անձանցից գանձվում է նաև լիցենզավորման համար օրենքով սահմանված պետական տուրքի գումարի չափով վնասի հատուցում:

ՀՀ օրենսդրությամբ արգելված գործունեության մեջ զբաղվող անձանցից, բացի օրենքով սահմանված պատասխանատվության այլ միջոցների կիրառումից, գանձվում է նաև տուգանք՝ այդ գործունեության արդյունքում հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված իրացման շրջանառության (համախառն եկամտի) 100 տոկոսի չափով:

Օրենքը լրացվել է նոր N 4 հավելվածով, որով սահմանվում է ՀՀ-ում առաքվող կամ տեղափոխվող արտադրանքի, ապրանքների փաստաթղթավորման և գրանցման (հաշվառման) կարգը: Միաժամանակ, վերանայվել են նաև օրենքի 28-րդ հոդվածով ձեռնարկատիրական գործունեության առարկաները սահմանված կարգով չգրանցելու համար պատասխանատվություն սահմանող դրույթները: Այսպես.

■ Հարկ վճարողի կողմից օրենքի N4 հավելվածով սահմանված կարգի խախտման՝ անփաստաթուղթ արտադրանքի, ապրանքների տեղափոխման կամ առաքման կամ առաքվող

կամ տեղափոխվող ապրանքն ուղեկցող փաստաթուղթը սահմանված կարգով չգրանցելու դեպքում խախտման հիմք հանդիսացող գործարքի կամ գործողության մասով գանձվում է տուգանք անփաստաթուղթ ապրանքների կամ չգրանցված ուղեկցող փաստաթղթով ապրանքների գնի (արժեքի) 50 տոկոսի չափով:

■ Նշված խախտումը արձանագրվելուց հետո մեկ տարվա ընթացքում խախտման կրկնական փաստ արձանագրվելու դեպքում գանձվում է տուգանք՝ անփաստաթուղթ ապրանքների կամ չգրանցված ուղեկցող փաստաթղթով ապրանքների գնի (արժեքի) 100 տոկոսի չափով:

■ Նշված խախտումը արձանագրվելուց հետո մեկ տարվա ընթացքում խախտման երրորդ փաստ արձանագրվելու դեպքում գանձվում է տուգանք՝ անփաստաթուղթ ապրանքների կամ չգրանցված ուղեկցող փաստաթղթով ապրանքների գնի (արժեքի) 200 տոկոսի չափով:

Փաստաթուղթ	«Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	26 դեկտեմբերի 2011թ., ՀՕ-313-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 71 (874), 28.12.2011թ.
Ուժի մեջ է	2012 թվականի հունվարի 1-ից

Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված փոփոխությամբ սահմանվում է, որ հաստատագրված վճարով չեն հարկվում գործունեության հետևյալ տեսակները՝ հանրային սննդի ոլորտում իրականացվող, հյուրանոցային տնտեսության օբյեկտների, վարսավիրական ծառայությունների մատուցման, ավտոտեխսպասարկման կայանների (կետերի), ավտոկանգառների գործունեությունները (ուժի մեջ է 2012 թվականի ապրիլի 1-ից): 2012թ. ապրիլի 1-ից նշված գործունեության տեսակները հարկվելու են արտոնագրային վճարով:

Օրենքում կատարված մեկ այլ փոփոխությամբ՝

խաղատների գործունեության կազմակերպման համար հաստատագրված վճարի ամսական չափի որոշման համար ելակետային տվյալի x-ապատիկ թիվ է սահմանվում 5000000-ը (նախկինում՝ 4000000), լոտոտրոն, բինգո և մեխանիկական վիճակահանության համար ծրագրավորված այլ սար-



քերի համար՝ 18750-ը (նախկինում՝ 15000), այլ շահումով խաղային ավտոմատների համար՝ 156250-ը (նախկինում՝ 125000), ինտերնետ կամ նմանօրինակ ցանկացած գլոբալ համակարգի և ցանկացած համակարգ-

ված ցանցային կատուղիների միջոցով ինտեր-
նետ շահումով խաղերի կազմակերպման հա-
մար՝ 1250000-ը (նախկինում՝ 1000000),

անմիջականորեն (խաղասրահում) ինտերնետ
շահումով խաղերի կազմակերպման համար՝
93750-ը (նախկինում՝ 75000):

Փաստաթուղթ	«Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	26 դեկտեմբերի 2011թ, ՀՕ-314-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 71 (874), 28.12.2011թ.
Ուժի մեջ է	2012 թվականի ապրիլի 1-ից

Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված լրացմամբ 2012թ. ապ-
րիլի 1-ից արտոնագրային վճարով հարկվող
գործունեության տեսակներ են համարվում
նաև՝

- 1) հանրային սննդի ոլորտում իրականացվող
գործունեությունը
- 2) հյուրանոցային տնտեսության օբյեկտների
գործունեությունը
- 3) թեթև մարդատար մեքենայով ուղևորափո-
խադրումը
- 4) վարսավիրական ծառայությունների մա-
տուցման գործունեությունը
- 5) ավտոտեխսպասարկման կայանների (կե-
տերի) գործունեությունը
- 6) ավտոկանգառների գործունեությունը
- 7) բիլիարդ խաղի կազմակերպումը:

Վերոնշյալ գործունեության տեսակների հա-
մար առանձին սահմանվում է արտոնագրա-
յին վճարի հաշվարկման ու վճարման կարգը,
պատասխանատվությունը:

Սահմանվում է, որ վերոնշյալ գործունեությ-
ան տեսակների մասով գործունեության իրա-
կանացման յուրաքանչյուր վայրի համար ար-
տոնագրում նշված արտոնագրային վճարի
ելակետային տվյալի մեծությունը հարկային
մարմնի կողմից փաստացի արձանագրված
ելակետային տվյալի մեծությունից պակաս
լինելու դեպքում արտոնագրային վճար վճա-

րողից գանձվում է տվյալ ժամանակաշրջանի
համար պակաս վճարված արտոնագրային
վճարը և տուգանք՝ պակաս վճարված արտո-
նագրային վճարի 50 տոկոսի չափով: Հարկա-
յին մարմնի կողմից խախտումն արձանագր-
վելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, նույն
գործունեության տեսակի գծով նույն խախ-
տումն արձանագրելու դեպքում արտոնագ-
րային վճար վճարողից գանձվում է տվյալ ժա-
մանակաշրջանի համար պակաս վճարված
արտոնագրային վճարը և տուգանք՝ պակաս
վճարված արտոնագրային վճարի գումարի
չափով:

Իրավաբանական անձի կամ անհատ ձեռնար-
կատիրոջ կողմից առանց արտոնագրի գոր-
ծունեության իրականացման տվյալ վայրում
վերոնշյալ գործունեության տեսակով (տեսակ-
ներով) զբաղվելու դեպքում իրավաբանական
անձից կամ անհատ ձեռնարկատիրոջից գանձ-
վում է տուգանք՝ ապօրինի գործունեության
համար «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ
հոդվածով սահմանված կարգով հաշվարկվող
տուգանքի չափով:

Վերոնշյալ օրենքն ուժի մեջ մտնելու պահից
հետո՝ 30 օրվա ընթացքում, վերոնշյալ գոր-
ծունեության տեսակներ իրականացնողները
հարկային մարմին ներկայացնում են հայտա-
րարություն արտոնագրային վճար վճարող
համարվելու մասին:

Փաստաթուղթ	«Ակցիզային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	26 դեկտեմբերի 2011թ, ՀՕ-317-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 71 (874), 28.12.2011թ.
Ուժի մեջ է	2012 թվականի հունվարի 1-ից

Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված լրացմամբ ակցիզային հարկով հարկվող ապրանքախումբ են համարվում նաև շարժիչային յուղերը, 25.0 մլն դրամ և ավելի մաքսային արժեք ունեցող կամ մինչև 2 տարին ներառյալ թողարկման տարեթիվ և 4500 սմ³ և ավելի շարժիչի աշխատանքային ծավալ ունեցող թեթև մարդատար ավտոմեքենաները:

2012թ. հունվարի 1-ից վերանայվում են նաև ակցիզային հարկի դրույքաչափերը՝ գարեջրի, խաղողի գինիների, վերմուտ և խաղողի այլ գինիների, խմորման ենթակա այլ ըմպելիքների, էթիլային սպիրտի, սպիրտային խմիչքների համար:

Սահմանվում է, որ սիգարների կամ մինչև 25000 շիշ ալկոհոլային խմիչքների ներմուծման դեպքերում ակցիզային դրոշմանիշերով



դրոշմավորումը կարող է իրականացվել ՀՀ մաքսային տարածքում՝ մինչև մաքսային ձևակերպումների իրականացումը՝ մաքսային հսկողության ներքո:

Փաստաթուղթ	«Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	27 դեկտեմբերի 2011թ, ՀՕ-334-Ն
Հրատարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 71 (874)դ, 28.12.2011թ.
Ուժի մեջ է	2012 թվականի հունվարի 1-ից

Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված փոփոխությամբ սահմանվում է, որ ԱԱՀ վճարով համարվող անձանց կողմից ԱՏԳԱԱ 841920000, 841990150, 8422 (բացառությամբ 842211000 և 842290100 ծածկագրերի), 8426, 8429, 8430, 8435, 8441, 84431, 8452 (բացառությամբ 545210 և 845290000 ծածկագրերի), 8453, 8475, 8478, 8479, 85023100 կամ 870410 ծածկագրերին դասվող ապրանքների մասով մաքսային մարմինների հաշվարկած ԱԱՀ-ի գումարների պետական բյուջե վճարման ժամկետը հետաձգվում է՝

1. հայտարարագրման օրվանից մեկ տարի ժամկետով, եթե նշված ծածկագրերին դասվող ներմուծված ապրանքների մաքսային արժեքը պակաս է 70 մլն դրամից.

2. հայտարարագրման օրվանից երկու տարի ժամկետով, եթե նշված ծածկագրերին դասվող ներմուծված ապրանքների մաքսային արժեքը կազմում է 70 մլն դրամ և ավելի.

3. հայտարարագրման օրվանից երեք տարի ժամկետով, եթե նշված ծածկագրերին դասվող ներմուծված ապրանքների մաքսային արժեքը

գերազանցում է 300 մլն դրամը:

ԱԱՀ վճարողների կողմից ԱՏԳԱԱ 250510, 250900, 251820, 2836, 3901, 3902, 3903, 3904, 3905, 3906 ծածկագրերին դասվող ապրանքների մասով մաքսային մարմինների հաշվարկած ԱԱՀ-ի գումարները պետական բյուջե վճարման ժամկետը հետաձգվում է հայտարարագրման օրվանից մեկ տարի ժամկետով:

ՀՀ կառավարության որոշմամբ ընտրված կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներդրումային ծրագրերի շրջանակներում, 300 մլն դրամը գերազանցող վերոնշյալ ապրանքներից բացի, այլ ապրանքների ներմուծման դեպքում սահմանված կարգով մաքսային մարմինների կողմից հաշվարկված ԱԱՀ-ի գումարների վճարման ժամկետը հետաձգվում է երեք տարի ժամկետով: Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի ընտրության կարգը սահմանում է ՀՀ կառավարությունը:

Վերոնշյալ ծածկագրերին դասվող ապրանքների մասով ներմուծման ժամանակ հաշվարկված ԱԱՀ-ի գումարների վճարման ժամկետը

կարող է չհետաձգվել՝ մաքսային մարմիններին ներկայացված հարկ վճարողի գրավոր հայտարարությամբ:

Մինչև վերոնշյալ հետաձգման ժամկետի լրանալը վերոնշյալ ապրանքների մասով մաքսային մարմինների հաշվարկած ԱԱՀ-ի գումարների վճարման ժամկետի հետաձգումը դադարեցվում է (ԱԱՀ-ի վճարման պարտավորությունն է առաջանում):

1. | ներմուծված ապրանքներն օտարվելու կամ օգտագործման իրավունքով այլ անձանց հանձնելու (բացառությամբ վերակազմակերպման դեպքերի) դեպքերում՝ օտարվելու կամ օգտագործման իրավունքով այլ անձանց հանձնելու օրվան հաջորդող օրը:

2. | մաքսային մարմիններին ներկայացված՝ հարկ վճարողի գրավոր հայտարարությամբ՝ հայտարարությունը ներկայացնելու օրվան հաջորդող օրը՝ հայտարարությունում նշված ԱԱՀ-ի գումարի չափով:

Սահմանվում է, որ հանձնարարության կամ պրինցիպալի անունից հանդես գալու պայման նախատեսող գործակալության պայմանագրերի հիման վրա հանձնակատարի կամ գործակալի կողմից մատուցվող ծառայությունների մասով ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունն է համարվում համապատասխանաբար՝ հանձնակատարին, գործակալին հասանելիք գումարը (վարձատրության և հանձնակատարի կամ գործակալի կողմից իր անունով կատարած ծախսերի դիմաց որպես փոխհատուցում վճարվող գումարը՝ առանց ԱԱՀ-ի), իսկ հանձնարարողի, պրինցիպալի համար ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունն է համարվում հանձնարարության կամ գործակալության պայմանագրի հիման վրա մատակարարված ապրանքի կամ մատուցված ծառայության ընդհանուր արժեքը՝ առանց ԱԱՀ-ի:

Կոմիսիոների կամ գործակալի անունից հանդես գալու պայման նախատեսող գործակալության պայմանագրերի դեպքերում կոմիսիոների կամ գործակալի մոտ ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունն է համարվում կոմիսիայի կամ գործակալության պայմանագրի հիման վրա մատակարարված ապրանքի կամ մատուցված ծառայության ընդհանուր արժեքը (առանց ԱԱՀ-ի), իսկ կոմիտենտի կամ պրինցիպալի համար ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունն է համարվում հանձնարարության կամ գործակալության պայմանագրի հիման վրա մատակարարված ապրանքի կամ մատուցված ծառայության արժեքի (առանց ԱԱՀ-ի) և

համապատասխանաբար՝ կոմիսիոների կամ գործակալի հասանելիք գումարի (առանց ԱԱՀ-ի) տարբերությունը:

Սահմանվում է նաև, որ անմիջական ներմուծող կամ անմիջական արտադրող հանդիսացող և ամսվա հաշվարկով 100 միլիոն դրամ և ավելի շրջանառություն ունեցող ԱԱՀ վճարողների հաշվետու ժամանակաշրջանի հարկվող շրջանառությունը ավելացվելու է 20 տոկոսով, եթե հարկ վճարողի իրականացրած գործարքների 10 և ավելի տոկոսը իրականացվել է առանց հարկային հաշիվների կամ սահմանված տվյալները պարունակող ուղեկցող փաստաթղթի:

Օրենքում կատարված լրացմամբ սահմանվում է, որ հարկային մարմնի կողմից տրամադրված հարկային հաշիվների ձևերի սերիա-համարները անվավեր են ճանաչվում հարկային մարմնի կողմից՝ հարկային մարմնից ստացված հարկային հաշիվների ձևերի խոտանման, չօգտագործված ձևերի վերադարձման կամ հարկ վճարողի կամքից անկախ պատճառներով կորստի դեպքում՝ հարկ վճարողի ներկայացրած տվյալների (սերիա-համարների) հիման վրա: Հարկային մարմնի կողմից անվավեր ճանաչման ենթակա՝ հարկային հաշիվների սերիա-համարների վերաբերյալ տեղեկությունների ներկայացման կարգը սահմանում է վերադաս հարկային մարմինը:

Դուրս գրված հարկային հաշիվներն անվավեր են ճանաչվում հարկային հաշիվները սխալներով լրացվելու, գործարքը հարկային հաշվում նշված պայմաններով չկատարվելու, հարկային հաշվում նշված պայմանները օրենքով սահմանված դեպքերում և կարգով փոփոխվելու դեպքերում: Այս դեպքում հարկային հաշիվների անվավեր ճանաչման կարգը, ինչպես նաև սահմանված կարգով անվավեր ճանաչված հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկություններ ներկայացնելու կարգը սահմանում է ՀՀ կառավարությունը:

ԱԱՀ-ով հարկման նպատակով հարկային հաշիվների անվավեր ճանաչման հետ կապված ԱԱՀ-ով հարկվող շրջանառության և հարկի գումարի նվազեցումներ չեն կատարվում, եթե՝

1. | չի պահպանվել հարկային հաշիվների անվավեր ճանաչման կարգը (ՀՀ կառավարության 11.11.10թ.թիվ 1504 որոշման N4 հավելված) կամ

2. | հարկ վճարողը չի ներկայացրել տեղեկություն հարկային հաշիվը անվավեր ճանաչելու վերաբերյալ:

Փաստաթուղթ	«Հողի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	29 դեկտեմբերի 2011թ, ՀՕ-353-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 2 (876), 09.01.2012թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված լրացմամբ սահմանվում է, որ հողի հարկից ազատվում են Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին) սեփականության և անհատույց մշտական օգտագործման իրավունքով պատկանող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դասակարգմանը համապատասխան կրոնական, պաշտամունքային շենքերի ու շինությունների, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին) պատկանող՝ հուշարձանի կարգավիճակ չունեցող եկեղեցիների, հոգևոր-մշակութային, կրթադաստիարակչական, եկեղեցական և ծիսական պարագաների արտադրության և իրացման համար օգտագործվող կառույցների, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի) ներքին սպասարկումն իրականացնող արհեստանոցների զբաղեցրած, ինչպես նաև դրանց սպասարկման և օգտագործման համար անհրաժեշտ հողամասերը: Նշված շենքերի և շինությունների, ինչպես նաև դրանց սպասարկման և օգտագործման համար անհրաժեշտ հողամասերի ցանկը սահմանում է ՀՀ կառավարությունը: Հողի հարկից ազատվում են նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հողամասից կամովին հրաժարվելու դեպքում՝ համայնքային կամ պետական սեփականություն ճանաչված հողամասերի սեփականատեր դարձած ֆիզիկական անձինք՝ այդ հողամասերի համար:

Սահմանվում է, որ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը) ազատվում է նաև իրեն սեփա-

կանության և անհատույց մշտական օգտագործման իրավունքով պատկանող՝ վերոնշյալ շենքերի ու շինությունների զբաղեցրած, ինչպես նաև դրանց սպասարկման և օգտագործման համար անհրաժեշտ հողամասերի համար 2011թ. հունվարի 1-ի դրությամբ հաշվարկված հողի հարկի, ինչպես նաև այդ գումարները օրենսդրությամբ սահմանված ժամկետներում չվճարելու համար հաշվարկված՝ հարկային օրենսդրությամբ սահմանված տույժերի և տուգանքների գումարների վճարումից: Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին) հարկային արտոնությունների տրամադրման հետևանքով համայնքների եկամուտների նվազեցումը պետության կողմից փոխհատուցման ենթակա չէ:

ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հողամասից կամովին հրաժարվելու դեպքում համայնքային կամ պետական սեփականություն ճանաչված հողամասերի սեփականատեր հանդիսացած ֆիզիկական անձինք ազատվում են նաև այդ հողամասերի համար 2007 թվականի հունվարի 1-ի դրությամբ հաշվարկված և չվճարված հողի հարկի, ինչպես նաև այդ գումարները օրենսդրությամբ սահմանված ժամկետներում չվճարելու համար հաշվարկված՝ հարկային օրենսդրությամբ սահմանված և չվճարված տույժերի գումարների վճարումից: Հողամասից կամովին հրաժարված ֆիզիկական անձանց հարկային արտոնությունների տրամադրման հետևանքով համայնքների եկամուտների նվազեցումը պետության կողմից փոխհատուցման ենթակա չէ:

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	29 դեկտեմբերի 2011թ, ՀՕ-354-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 2 (876), 09.01.2012թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից

Համառոտ նկարագիր

Օրենսգրքում կատարված լրացմամբ սահմանվում են նոր հասկացություններ, մասնավորապես՝ «ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար» մաքսային ռեժիմով ներմուծված և «ժամանակավոր արտահանում՝ վերամշակման համար» մաքսային ռեժիմով արտահանված ապրանքների վերամշակումից հետո ստացվելիք արդյունքի նվազագույն քանակությունն այն քանակությունն է, որը գոյանում է ըստ արտադրական պրոցեսի, վերամշակման համար ներմուծված և վերամշակման համար արտահանված մեկ միավոր ապրանքի և տեղական ու այլ ապրանքների քանակությունից՝ բնափրային, արժեքային չափման միավորներով կամ տոկոսային արտահայտությամբ, «ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար» մաքսային ռեժիմով ներմուծված և «ժամանակավոր արտահանում՝ վերամշակման համար» մաքսային ռեժիմով արտահանված ապրանքների վերամշակումից գոյացած թափոնների և մնացորդների նվազագույն քանակությունն այն քանակությունն է, որը գոյանում է արտադրական պրոցեսի արդյունքում

և չի համարվում վերոնշյալ դրույթով սահմանված վերամշակումից հետո ստացվելիք արդյունքի նվազագույն քանակություն, թափոն է համարվում վերամշակումից գոյացած հումքի, նյութերի այն քանակությունը, որը դասվում է հումքի, նյութերի հետ նույն ԱԳՏ ԱԱ ծածկագրին, կորցրել է իր սկզբնական սպառողական հատկությունները և հնարավոր չէ օգտագործել որպես հումք նմանատիպ կամ այլ արտադրական պրոցեսում, մնացորդ է համարվում վերոնշյալ դրույթով սահմանված՝ վերամշակումից ստացվելիք արդյունքի նվազագույն քանակություն չհանդիսացող՝ վերամշակումից գոյացած հումքի և նյութերի այն քանակությունը, որը դասվում է հումքի, նյութերի հետ նույն ԱՏԳ ԱԱ ծածկագրին և չի կորցրել իր սկզբնական սպառողական հատկությունները: Օրենսգրքում կատարված լրացմամբ սահմանվում է, որ «ժամանակավոր արտահանում՝ վերամշակման համար» մաքսային ռեժիմի շրջանակներում կարող է իրականացվել նաև երաշխիքային ժամկետում գտնվող ապրանքների փոխարինում օտարերկրյա ապրանքներով:

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	27 դեկտեմբերի 2011թ, ՀՕ-331-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 71 (874)դ, 12.28.2011թ.
Ուժի մեջ է	2012 թվականի հունվարի 1-ից

Համառոտ նկարագիր

Օրենսգրքում կատարված փոփոխությամբ հանվել են մի շարք ԱՏԳԱԱ-ներ, մասնավորապես՝ 0301, 3917 21 100, 3917 23 100, 3917 32 910, 4011 10 000, 4012 11 000, 4012 12 000, 4012 20 000, 4013 10 100, 4015 19 100, 4015 19 900, 4015 90 000, 4016 91 000, 4016 92 000, 6406, 8215, 8443 32, 8443 32 100, 8443 32 200, 8443 39, 8443 39 210, 8443 99, 8443 99 100, 8501, 8502, 8516 21 000, 8516 29, 8517 11 000, 8517 12 000, 8517 70 900, 8525 80 110, 8525 80 190, 8525 80 300, 8525 80 910, 8525 80 990, 8528 51 000, 8528 69 050, 8528 71 200, 8528 73 000, 8543 70, 8543 90 000, 8708 99 ԱՏԳԱԱ-ները: 40, 45, 81, 82 ԱՏԳԱԱ-ների մաքսատուրքի ներ-

մուծման դրույթաչափ է սահմանվել 10%-ը: Օրենսգրքը լրացվել է մի շարք ԱՏԳԱԱ-ներով: Օրենսգրքի 228-րդ հոդվածում (Վերադաս մաքսային մարմնում մտավոր սեփականության օբյեկտի գրանցումը, գրանցամատյանի վարումը և կասեցման դիմումի քննարկումը) կատարված փոփոխությամբ սահմանվում է, որ քննարկելով կասեցման դիմումը՝ վերադաս մաքսային մարմինը 7-օրյա ժամկետում կայացնում է դիմումը բավարարելու կամ այն մերժելու մասին որոշում: Դիմումը բավարարելու մասին որոշում կայացնելու դեպքում վերոնշյալ 7-օրյա ժամկետում վերադաս մաքսային մարմինը մտավոր

սեփականության օբյեկտը գրանցում է գրանցամատյանում և այդ մասին տեղեկություն հրապարակում իր պաշտոնական կայքէջում՝ նշելով նաև այն ժամանակահատվածը, որի ընթացքում մաքսային մարմինները համապատասխան միջոցներ պետք է ձեռնարկեն և դրանց մասին տեղեկացնեն հայտատուին: Նշված ժամանակահատվածը հաշվարկվում է պաշտոնական կայքէջում տեղեկությունների հրապարակման օրվան հաջորդող 20-րդ օրվանից: Հայտատուի հիմնավորված դիմու-

մի համաձայն ժամանակահատվածը, որի ընթացքում մաքսային մարմինները համապատասխան միջոցներ պետք է ձեռնարկեն, կարող է երկարաձգվել վերադաս մաքսային մարմնի կողմից:

Կասեցման կամ ժամանակահատվածի երկարաձգման դիմումները մերժելու դեպքում վերադաս մաքսային մարմինն այդ մասին հայտատուին տեղեկացնում է հիմնավորված և գրավոր, ինչը կարող է բողոքարկվել դատական կարգով:

1.2 | ՀՀ կառավարության որոշումներ

Փաստաթուղթ	«Հարկային մարմնի գործունեության շրջանակներում ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի դեկտեմբերի 17-ի N 1487-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	10 նոյեմբերի 2011թ, N 1636-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 64 (867), 30.11.2011թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

Համառոտ նկարագիր

Որոշմամբ հաստատվում է հարկային մարմնի գործունեության շրջանակներում ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդ-

հանուր նկարագիրը:

Մինչև վերոնշյալ որոշումն ուժի մեջ մտնելը՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ը ստուգումներն իրականացնում է արդեն իսկ պլանավորած ցանկի համաձայն:

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հոկտեմբերի 3-ի N 1584-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	10 նոյեմբերի 2011թ, N 1637-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 65 (868), 07.12.2011թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը

Համառոտ նկարագիր

Որոշմամբ լրացում է կատարվում ՀՀ կառավարության 2002 թվականի հոկտեմբերի 3-ի «Հարկային գաղտնիք հանդիսացող տեղեկությունների օգտագործմամբ աշխատանքներ կատարելու իրավասություն ունեցող պետական մարմիններին Հայաստանի Հանրապետության հարկային ծառայության մարմնի կողմից հարկային գաղտնիք հանդիսացող տեղեկությունների տրամադրման կարգը հաստատելու մասին» N 1584-Ն որոշմամբ հաստատված կարգում, որով սահմանվում է, որ ՀՀ տնտեսական

մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ տեղեկություններ է ներկայացնում որոշմամբ հաստատված կարգով ստացված տեղեկությունների հիման վրա արձանագրված խախտումների վերաբերյալ՝ ռիսկերի վրա հիմնված ստուգումների պլանավորման և անցկացման համար: Փոխադարձ տեղեկությունների ներկայացման ձևը հաստատվում է ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի և ՀՀ ԿԱ ՊԵԿ համատեղ հրամանով:

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետությունում արտադրվող և Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ակցիզային հարկով հարկման ենթակա որոշ ապրանքների դրոշմավորման համար «2012» թվագրմամբ ակցիզային դրոշմանիշերը կիրառության մեջ դնելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	24 նոյեմբերի 2011թ, N 1663-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր N 65 (868), 07.12.2011թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից

Համառոտ նկարագիր

Որոշմամբ նախատեսվում է կիրառության մեջ դնել ՀՀ-ում արտադրվող և ՀՀ ներմուծվող ծխախոտի արտադրանքի և ալկոհոլային խմիչքի դրոշմավորման համար «2012» թվագրմամբ «Ծխախոտ» և «Ալկոհոլային խմիչք» տեսակների ակցիզային դրոշմանիշերը:

«2009», «2010» և «2011» թվագրմամբ ակցիզային դրոշմանիշերի առկայության դեպքում ծխախոտի արտադրանք և ալկոհոլային խմիչք արտադրողներին ու ներմուծողներին կարող են տրամադրվել նաև «2009», «2010» և «2011» թվագրմամբ ակցիզային դրոշմանիշեր:

Փաստաթուղթ	«Բարձրաստիճան պաշտոնատար անձի՝ հարկային տարվա գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց հայտարարագրի ու բարձրաստիճան պաշտոնատար անձի պաշտոնական պարտականություններն ստանձնելու կամ պաշտոնական պարտականությունները դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց հայտարարագրի օրինակելի ձևերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	15 դեկտեմբերի 2011թ, N 1819-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր N 71 (874)դ, 28.12.2011թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

Համառոտ նկարագիր

Որոշմամբ հաստատվում են բարձրաստիճան պաշտոնատար անձի՝ հարկային տարվա գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց հայտարարագրի և բարձրաստիճան պաշտոնատար անձի՝ պաշտոնական պարտա-

կանություններն ստանձնելու կամ պաշտոնական պարտականությունները դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց հայտարարագրի օրինակելի ձևերը:

Փաստաթուղթ	«Բարձրաստիճան պաշտոնատար անձի գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց հայտարարագրերում, ինչպես նաև բարձրաստիճան պաշտոնատար անձի ամուսնու, համատեղ ապրող ծնողի, համատեղ ապրող չափահաս և չամուսնացած զավակի գույքի, եկամուտների մասին հայտարարագրերում ներառված հրապարակման (տրամադրման) ենթակա տվյալների ցանկը, բովանդակությունը և ձևը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	15 դեկտեմբերի 2011թ, N 1835-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր N 71 (874)դ, 28.12.2011թ.
Ուժի մեջ է	2012 թվականի հունվարի 1-ից

Համառոտ նկարագիր

Որոշմամբ հաստատվում են բարձրաստիճան պաշտոնատար անձի գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց հայտարարագրերում, ինչպես նաև բարձրաստիճան պաշտոնատար անձի ամուսնու, համատեղ ապրող

ծնողի, համատեղ ապրող չափահաս և չամուսնացած զավակի գույքի, եկամուտների մասին հայտարարագրերում ներառված հրապարակման (տրամադրման) ենթակա տվյալների ցանկը, բովանդակությունը և տվյալների ձևը:

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 4-ի N 1005-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	15 դեկտեմբերի 2011թ, N 1832-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր N 71 (874)դ, 28.12.2011թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից

Համառոտ նկարագիր

Որոշմամբ փոփոխություններ են կատարվում ՀՀ կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 4-ի «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» N 1005-Ն որոշման մեջ, որոնց համաձայն լուծարվում են ՀՀ ԿԱ ՊԵԿ Հարկային տեսչությունների աշխատանքների համակարգման և Ներքին դիտարկումների և վերահսկողության վարչությունները, Մյասնիկյանի, Մալաթիա-Սեբաստիայի և Քանաքեռ-Զեյթունի հարկային տեսչությունները: Ստեղծվում են Հարկային տեսչությունների աշխատանքների կազմակերպման և ընթացիկ հսկողության, Ստուգումների կազմա-



կերպման և դիտարկման, Գերատեսչական հսկողության և Ներքին աուդիտի վարչությունները:

Փաստաթուղթ	«Հարկային մարմնի ներկայացուցիչ նշանակելու ենթակա հարկ վճարողների՝ 2012 թվականի ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	15 դեկտեմբերի 2011թ, N 1834-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր N 71 (874)դ, 28.12.2011թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից

Համառոտ նկարագիր

Որոշմամբ հաստատվում է հարկային մարմնի ներկայացուցիչ նշանակելու ենթակա հարկ վճարողների՝ 2012 թվականի ցանկը, որտեղ ներառված են թվով 47 կազմակերպություններ:

1.3 | Պաշտոնական պարզաբանումներ, հրահանգներ

Փաստաթուղթ	«Ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող փաստաբանի կողմից վճարվող անդամավճարները եկամտահարկով հարկման նպատակով համախառն եկամտից նվազեցնելու վերաբերյալ» ՀՀ ֆինանսների նախարարի և ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի պաշտոնական պարզաբանում
Ամսաթիվը և համարը	01 դեկտեմբերի 2011թ, 07 նոյեմբերի 2011թ, N 43
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր N 29 (412)դ, 26.12.2011թ.

Համառոտ նկարագիր

Պարզաբանմամբ նշվում է, որ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի համաձայն փաստաբանական գործունեությամբ զբաղվող փաստաբանի կողմից վճարված անդամավճարները «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի

27-րդ հոդվածի (Ծախսերի հաշվառումը) համաձայն համարվում են ծախս և ամբողջությամբ նվազեցվում են ձեռնարկատիրական գործունեությունից ստացված համախառն եկամտից:

Փաստաթուղթ	«2011 թվականի հունվարի 1-ի դրությամբ ծառայությունների մատուցման գործող կոնցեսիոն համաձայնությունները կոնցեսիոնների (օպերատորի) և կոնցեսիոնի (շնորհատուի) կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած չափանիշների համաձայն, Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնի կողմից որպես կոնցեսիայի պայմանագրեր որակելու ժամկետների վերաբերյալ» ՀՀ ֆինանսների նախարարի և ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի պաշտոնական պարզաբանում
Ամսաթիվը և համարը	17 նոյեմբերի 2011թ, N 44
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական Նորմատիվ ակտերի տեղեկագիր № 29 (412)դ, 26.12.2011թ.

Համառոտ նկարագիր

Պարզաբանմամբ նշվում է, որ 01.01.2011թ. դրությամբ ծառայությունների մատուցման գործող կոնցեսիոն համաձայնությունները կոնցեսիոնների (օպերատորի) և կոնցեսիոնի (շնորհատուի) կողմից ՀՀ կառավարության

սահմանած չափանիշների համաձայն, ՀՀ կառավարության լիազոր մարմնի կողմից որպես կոնցեսիայի պայմանագրեր որակելու ժամկետը սկսվում է 06.10.2011թ-ով:

Փաստաթուղթ	«Անչափահաս անձանց հարկային մարմիններում հաշվառման կանգնելու և հարկային պարտավորությունների կատարման հետ կապված մի քանի հարցերի վերաբերյալ» ՀՀ ֆինանսների նախարարի և ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի պաշտոնական պարզաբանում
Ամսաթիվը և համարը	17 նոյեմբերի 2011թ, N 45
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական Նորմատիվ ակտերի տեղեկագիր № 29 (412)դ, 26.12.2011թ.

Համառոտ նկարագիր

Պարզաբանմամբ նշվում է. անչափահաս անձանց ՀՎՀՀ-ները տրամադրում են հարկային մարմինները՝ անչափահաս անձի ծնողի (կամ ծնողներից մեկի) կամ խնամակալի (կամ խնամակալներից մեկի) կողմից ներկայացված ծննդյան վկայականի պատճենի, անչափահաս անձի սոցիալական քարտի պատճենի (առկայության դեպքում) կամ սոցիալական քարտի բացակայության վերաբերյալ լիազորված մարմնի տրամադրած տեղեկանքի պատճենի (բացակայության դեպքում) և անչափահաս անձի ծնողի (կամ ծնողներից մեկի) կամ խնամակալի (կամ խնամակալներից մեկի) կողմից լրացված՝ ՀՎՀՀ-ի տրամադրման դիմումի հիման վրա: Անչափահաս անձի հարկային պարտավորությունների հաշվառման համար հարկային մարմնում բաց-

վում են անձնական հաշվի քարտեր: Հարկ վճարող հանդիսացող անչափահաս անձի կողմից եկամտահարկի տարեկան եկամուտների (պարզեցված) հաշվարկները և ԱԱՀ-ի հաշվարկները հարկային մարմիններին ներկայացվում են նրա ծնողի (կամ ծնողներից մեկի) կամ խնամակալի (կամ խնամակալներից մեկի) միջոցով և ստորագրությամբ՝ հաշվարկներում նշելով անչափահաս անձի ՀՎՀՀ-ն: Հարկ վճարող հանդիսացող անչափահաս անձի կողմից հարկային պարտավորությունների (այդ թվում՝ եկամտահարկը և ԱԱՀ-ն) գումարների վճարումները կատարվում են նրա ծնողի (կամ ծնողներից մեկի) կամ խնամակալի (կամ խնամակալներից մեկի) միջոցով և ստորագրությամբ՝ վճարային փաստաթղթերում նշելով անչափահաս անձի ՀՎՀՀ-ն:

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի մի շարք հրամաններն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի հրաման
Ամսաթիվը և համարը	09 դեկտեմբերի 2011թ, N 2941-Ն
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր N 2 (415), 16.01.2012թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

Համառոտ նկարագիր

Հրամանով ուժը կորցրած են ճանաչվում՝

1. ՀՀ ԿԱ ՊԵԿ 2008թ-ի դեկտեմբերի 24-ի «Ֆիզիկական անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման մի քանի հարցերի մասին» հրահանգը հաստատելու մասին» N 17-Ն հրամանը,

2. ՀՀ ԿԱ ՊԵԿ 2008թ-ի դեկտեմբերի 24-ի «Վերահաս հարկային մարմին հայտարարագիր ներկայացնողների մասին» հրահան-

գը հաստատելու մասին» N 18-Ն հրամանը,

3. ՀՀ ԿԱ ՊԵԿ 2008թ-ի դեկտեմբերի 24-ի «Կազմակերպությունների կողմից, հարկային մարմնի պահանջով, ֆիզիկական անձանց՝ հայտարարագրման ենթակա գույքի հետ կապված գործարքների վերաբերյալ տեղեկությունները հարկային մարմին ներկայացնելու ծանուցագրի ձևը սահմանելու մասին» N 19-Ն հրամանը:

2. ՀԱՐԱԿԻՑ (ՀՀ ԿԱ ՊԵԿ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌՆՉՎՈՂ) ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿԱԼԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Փաստաթուղթ	«Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	21 դեկտեմբերի 2011թ, ՀՕ-303-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր N 71 (874), 28.12.2011թ.
Ուժի մեջ է	2012 թվականի հունվարի 1-ից

Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված փոփոխությամբ սահմանվում է, որ վարձու աշխատողները սոցիալական վճարումները կատարում են հետևյալ դրույքաչափերով՝

■ աշխատավարձի և դրան հավասարեցված եկամուտների ամսական չափը՝ մինչև 2.000.000 դրամ՝ 3 տոկոս,

■ աշխատավարձի և դրան հավասարեցված եկամուտների ամսական չափը՝ 2.000.000 դրամից ավելի՝ 60.000 դրամ գումարած 2.000.000 դրամը գերազանցող գումարի 8 տոկոսը:

■ վարձու աշխատողների աշխատավարձից և դրան հավասարեցված եկամուտներից

պարտադիր սոցիալական ապահովության վճարներ հաշվարկում, պահում և ՀՀ պետական բյուջե են փոխանցում նրանց գործատուները:

■ սահմանվում է, որ անհատ ձեռնարկատերերը (ձեռներեցները) տարվա համար հաշվարկված սոցիալական վճարների և «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքով նախատեսված սոցիալական վճարների տարբերությունը ՀՀ պետական բյուջե են փոխանցում (վճարում) հաջորդ տարվա մայիսի 1-ից ոչ ուշ:

■ անհատ ձեռնարկատերը (ձեռներեցը), յուրաքանչյուր տարվա արդյունքներով՝ մինչև

օրացույցային տարվան հաջորդող ապրիլի 15-ը, լիազորված մարմին է ներկայացնում (մասնավորապես Էլեկտրոնային եղանակով կամ փոստով՝ «Հարկերի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և պայմաններով, կամ հանձնում ըստ պատկանելության) տարեկան եկամուտների մասին հայտարարագիր:

Օրենքում կատարված մեկ այլ փոփոխությամբ սահմանվում է, որ աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու (այսինքն՝ աշխատանքի ընդունման մասին գրավոր հրամանի և (կամ) գրավոր պայմանագրի բացակայության) փաստը ՀՀ կառավարության սահմանած կարգով արձանագրելու դեպքում գործատուն տվյալ (արձանագրման) ամսում յուրաքանչյուր չձևակերպված վարձու աշխատողի համար հաշվարկում և վճարում է պարտադիր սոցիալական ապահովության վճար՝

ա. 60.000 դրամի չափով, եթե չձևակերպված վարձու աշխատողների թվաքանակը մեկից երեք է,

բ. 150.000 դրամի չափով, եթե չձևակերպված վարձու աշխատողների թվաքանակը չորսից վեց է,

գ. 300.000 դրամի չափով, եթե չձևակերպված վարձու աշխատողների թվաքանակը յոթից ինն է,

դ. 600.000 դրամի չափով, եթե չձևակերպված վարձու աշխատողների թվաքանակը գերազանցում է ինը:

ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով չգրանցված և արտոնագրային վճար վճարող չհանդիսացող ֆիզիկական անձանց կողմից ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու դեպքում (ապօրինի գործունեություն)՝ գանձվում է տուգանք՝ այդ գործունեության արդյունքում անհատ ձեռնարկատերերի համար սույն օրենքով սահմանված կարգով հաշվարկված տարեկան համախառն եկամուտների 10 տոկոսի չափով, բայց 60000 դրամից, ինչպես նաև յուրաքանչյուր աշխատողի համար 60000 դրամից ոչ պակաս:

ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով չգրանցված և արտոնագրային վճար վճարող չհանդիսացող ֆիզիկական անձանց կողմից ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու դեպքում նախատեսված տուգանքը կիրառվում է նաև կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների համար «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով սահմանված տեխնիկական միջոցների համար նախատեսված՝ յուրաքանչյուր լիցենզիայի համապատասխան ներդրի բացակայության պարագայում ուղևորափոխադրումների դեպքում:

Փաստաթուղթ	«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	26 դեկտեմբերի 2011թ, ՀՕ-310-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 71 (874), 28.12.2011թ.
Ուժի մեջ է	2012 թվականի հունվարի 1-ից

Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված լրացմամբ սահմանվում է, որ առաքվող կամ տեղափոխվող արտադրանքի, ապրանքների փաստաթղթավորման և (կամ) ուղեկցող փաստաթղթերի գրանցման օրենքով սահմանված կարգի խախտումների հայտնաբերմանն ուղղված հարկային մարմինների կողմից իրականացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումների

արդյունքում կազմված արձանագրությունը հիմք է օրենքով սահմանված կարգի խախտումը պարզելու և միայն խախտման հիմք հանդիսացող գործարքի կամ գործողության մասով օրենքով նախատեսված պատասխանատվության միջոցներ կիրառելու, ինչպես նաև հարկային պարտավորություններ առաջադրելու համար:

Փաստաթուղթ	«Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	27 դեկտեմբերի 2011թ, ՀՕ-325-Ն
Հրատարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 71 (874)դ, 28.12.2011թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրատարակման օրվանից վեց ամիս հետո

Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված լրացմամբ լիցենզավորման ենթակա գործունեություն է համարվում նաև «Արտաքին տնտեսական գործու-

նեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 2208 ծածկագրին դասվող օդու ներմուծումը:

Փաստաթուղթ	«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	27 դեկտեմբերի 2011թ, ՀՕ-326-Ն
Հրատարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 71 (874)դ, 28.12.2011թ.
Ուժի մեջ է	2012 թվականի հունվարի 1-ից

Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված լրացմամբ «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 2208 ծածկագրին դասվող օդու ներմուծման

համար պետական տուրքի տարեկան դրույքաչափ է սահմանվում բազային տուրքի 15000-ապատիկը:

Փաստաթուղթ	«Դրամարկղային գործառնությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	27 դեկտեմբերի 2011թ, ՀՕ-329-Ն
Հրատարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 71 (874)դ, 28.12.2011թ.
Ուժի մեջ է	2012 թվականի հունվարի 1-ից

Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված լրացմամբ սահմանվում է, որ «Դրամարկղային գործառնությունների մասին» ՀՀ օրենքը տարածվում է նաև ԱԱՀ վճարող համարվող անհատ ձեռնարկատերերի վրա: (Այս դրույթը կիրառվում է 2012թ. հունվարի 31-ից):

Օրենքում կատարված մեկ այլ լրացմամբ կանխիկ դրամով վճարումների նկատմամբ սահմանվում են նաև հետևյալ սահմանափակումները՝

1. ապրանքների (հիմնական միջոցների, ոչ նյութական ակտիվների և այլ ակտիվների), ծառայությունների, աշխատանքների միանվագ գործարքների դիմաց կանխիկ վճարումների

ընդունման առավելագույն չափը (բացառությամբ մանրածախ առևտրի և ծառայությունների ոլորտում անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանցից մինչև 3.0 մլն դրամի չափով միանվագ գործարքների դիմաց ընդունվող վճարումների)՝ սահմանափակման մեծությունն է 300 հազար դրամը: Սահմանափակումը կիրառվում է 2012թ-ի հունվարի 1-ից սկսած:

2. Մեկ ամսվա ընթացքում ապրանքների (հիմնական միջոցների, ոչ նյութական ակտիվների և այլ ակտիվների), ծառայությունների, աշխատանքների դիմաց կանխիկ վճարումների ընդունման առավելագույն չափը (բացա-

ռությանը մանրածախ առևտրի և ծառայությունների ոլորտում անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանցից ընդունվող վճարումների՝ սահմանափակման մեծությունն է 3.0 մլն դրամը: Սահմանափակումը կիրառվում է 2012թ-ի հունվարի 1-ից:

Օրենքում կատարված փոփոխությանը սահմանվում է, որ կանխիկ դրամով վճարումների կատարման և (կամ) ընդունման նկատմամբ «Դրամարկղային գործառնությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված սահմանափակումները չպահպանելու դեպքում գանձվում է տուգանք՝ կանխիկ դրամով վճարումների կատարման և (կամ) ընդունման թույլատրված

չափը գերազանցող գումարի (խախտման գումար) 5 տոկոսի չափով, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկը և ոչ ավելի, քան սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը: Սահմանափակումների չպահպանելն արձանագրելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, դրանք կրկին չպահպանելու դեպքում գանձվում է տուգանք՝ խախտման գումարի 10 տոկոսի չափով, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը և ոչ ավելի, քան սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհազարապատիկը:



3. ՀԱՐԿԱՅԻՆ և ՄԱՔՍԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԴՐՎԱԳՆԵՐ

3.1 | Ակնարկ գանգատարկումների և ծառայողական քննությունների

20.11.2011թ-ից մինչև 20.01.2012թ-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի կողմից քննարկվել է 38 դիմում-գանգատ, որից՝

- բավարարվել է 16
- մասնակի բավարարվել է 2
- կարճվել է 9
- մերժվել է 7
- կասեցվել է 4 դիմում-գանգատ:

20.11.2011թ-ից մինչև 20.01.2012թ-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի կողմից քննարկվել են թվով 7 ծառայողական քննության ընթացքում ստեղծված նյութեր, որոնց արդյունքում թվով 14 հարկային ծառայողներ ենթարկվել են կարգապահական պատասխանատվության:

3.2 | Միջազգային համագործակցություն

2011 թվականի նոյեմբերի 24-25-ը ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի գլխավորած պատվիրակությունը մասնակցել է ք.Գուանչոուում, Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն, կայացած՝ Համաշխարհային մաքսային կազմակերպության կողմից կազմակերպված Մաքսային և առևտրային հարցերով համաշխարհային ֆորումին: Ֆորումի ընթացքում քննարկվել են սահմանների համալիր կառավարման ոլորտում համագործակցությանը վերաբերող խնդիրներ, Համաշխարհային մաքսային կազմակերպության «Մեկ պատուհանի սկզբունք» կոմպենդիումի հիմնական դրույթները, լիազորված տնտեսական օպերատորների ինստիտուտի ներդրման արդյունավետության, մաքսային մարմին-տնտեսավարող սուբյեկտ, մաքսային մարմին-բեռնափոխադրող կազմակերպություն փոխգործակցությանն ու ընթացակարգերի պարզեցմանը վերաբերող հարցեր:

2011 թվականի դեկտեմբերի 7-9-ը ՀՀ ԿԱ ՊԵԿ մաքսային ծառայության պատվիրակությունը մասնակցել է ք.Աստանայում, Ղազախստանի Հանրապետություն, կայացած ԱՊՀ մասնակից պետությունների մաքսային ծառայությունների ղեկավարների խորհրդի 54-րդ նիստին: Նիստի ընթացքում քննարկվել են ԱՊՀ մասնակից պետությունների՝ մաքսային ոլորտում առկա միջազգային իրավական բազայի գույքագրման գործընթացները, տեղեկատվության փոխանակման ընթացակարգերի կատարելագործման, նախնական



տեղեկատվության փոխանակման հարցերը՝ ուղղված ռիսկերի կառավարման, մաքսային հսկողության ընթացակարգերի բարելավմանը և մաքսանենգության դեմ պայքարի ուժեղացմանը:

2011 թվականի դեկտեմբերի 12-13-ը տեղի է ունեցել նաև ՀՀ ԿԱ ՊԵԿ պատվիրակության այց Իրանի Իսլամական Հանրապետություն՝ հայ-իրանական սահմանային մաքսային կետի համատեղ օգտագործման մասին միջկառավարական համաձայնագրի շուրջ բանակցություններ անցկացնելու նպատակով: Այցի արդյունքում վերջնականացվել է համաձայնագրի տեքստը:

3.3 | Ոխուցում, մրցույթ

ՀՀ ԿԱ ՊԵԿ համակարգը տեղեկատվական տեխնոլոգիաների գծով մասնագետներով համալրելու նպատակով 2011թ. դեկտեմբերին հայտարարված մրցույթին մասնակցելու հայտ էին ներկայացրել 406 քաղաքացիներ, որոնց հետ անցկացված հարցազրույցի արդյունքներով լավագույն 40-ի հետ կնքվել են աշխատանքային պայամագրեր:

Եվս 39 դիմորդ, որոնք դրական գնահատականի են արժանացել, մինչև 2012թ. մայիսի 1-ը կարող են հրավիրվել աշխատելու ՀՀ ԿԱ ՊԵԿ համակարգում՝ պայմանագրային հիմունքներով:



3.4 | ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից վերահսկվող եկամուտների վերաբերյալ տվյալներ

Հ/Հ	Ցուցանիշ	Չափման միավոր	2011թ		
			Նույնամյակ	հունվար-նոյեմբեր	Աճի տեմպը նախորդ տարվա նկատմամբ (հունվար-նոյեմբեր %)
1	ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից ՀՀ պետական բյուջե հավաքագրված հարկային եկամուտներ, պետական տուրք և պարտադիր սոցիալական ապահովության վճարներ, այդ թվում՝	մլն դրամ	65,916.9	706,705.2	110.50
1.1	Հարկային եկամուտներ, այդ թվում՝	մլն դրամ	53,541.5	574,143.0	109.76
1.1.1	ԱԱՀ	մլն դրամ	28,523.8	295,642.2	112.98
1.1.2	Շահութահարկ	մլն դրամ	7,292.7	90,958.4	128.30
1.1.3	Եկամտահարկ	մլն դրամ	7,105.1	73,154.4	108.90
1.1.4	Ակցիզային հարկ	մլն դրամ	1,943.5	21,409.0	152.47
1.1.5	Ծխախոտի արտադրանքի համար հաստատագրված վճար	մլն դրամ	1,911.3	18,108.1	87.87
1.1.6	«Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքով սահմանված գործունեության տեսակներից հաստատագրված վճար	մլն դրամ	1,814.3	18,889.4	98.08
1.1.7	Մաքսատուրք	մլն դրամ	3,161.7	31,759.3	119.90
1.1.8	Այլ հարկային եկամուտներ	մլն դրամ	1,789.1	24,222.2	56.37
1.2	Պետական տուրք	մլն դրամ	2,420.6	20,332.7	113.09
1.3	Պարտադիր սոցիալական ապահովության վճարներ	մլն դրամ	9,954.7	112,229.4	113.96
2	Արտաքին առևտրի ապրանքաշրջանառությունը, այդ թվում՝	մլն դրամ	188 642	1 842 183	115.5
2.1	Արտահանում	մլն դրամ	45 963	445 829	132.1
2.2	Ներմուծում	մլն դրամ	142 679	1 396 354	111.0

Հ/Հ	Ցուցանիշ	Չափման միավոր	2011թ		
			Դեկտեմբեր	հունվար-դեկտեմբեր	Աճի տեմպը նախորդ տարվա նկատմամբ (հունվար-դեկտեմբեր %)
1	ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից ՀՀ պետական բյուջե հավաքագրված հարկային եկամուտներ, պետական տուրք և պարտադիր սոցիալական ապահովության վճարներ, այդ թվում՝	մլն դրամ	68,827.8	775,533.0	111.13
1.1	Հարկային եկամուտներ, այդ թվում՝	մլն դրամ	55,573.8	629,716.9	110.00
1.1.1	ԱԱՀ	մլն դրամ	28,736.8	324,379.0	113.55
1.1.2	Շահութահարկ	մլն դրամ	6,883.9	97,842.3	125.74
1.1.3	Եկամտահարկ	մլն դրամ	8,056.2	81,210.6	109.83
1.1.4	Ակցիզային հարկ	մլն դրամ	1,743.3	23,152.3	151.62
1.1.5	Ծխախոտի արտադրանքի համար հաստատագրված վճար	մլն դրամ	669.2	18,777.3	75.43
1.1.6	«Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքով սահմանված գործունեության տեսակներից հաստատագրված վճար	մլն դրամ	1,511.6	20,401.0	98.45
1.1.7	Մաքսատուրք	մլն դրամ	2,926.7	34,686.0	124.58
1.1.8	Այլ հարկային եկամուտներ	մլն դրամ	5,046.1	29,268.3	63.17
1.2	Պետական տուրք	մլն դրամ	2,034.26	22,367.0	111.64
1.3	Պարտադիր սոցիալական ապահովության վճարներ	մլն դրամ	11,219.7	123,449.1	117.20
2	Արտաքին առևտրի ապրանքաշրջանառությունը, այդ թվում՝	մլն դրամ	196 507	2 038 016	113.8
2.1	Արտահանում	մլն դրամ	45 544	491 350	129.5
2.2	Ներմուծում	մլն դրամ	150 963	1 546 666	109.6

3.5 **ՀՀ ԿԱ ՊՅարկային և մաքսային վարչարարության վերաբերյալ վիճակագրական տվյալներ**

Հ/Հ	Ցուցանիշ	Զափման միավոր	2011թ. ևայլ տվյալներ
1.1	Նոր գրանցված (ՀՎՀՀ ստացած) հարկ վճարողների թիվ, այդ թվում՝ ֆիզիկական անձ	հատ	855
1.2	Իրավաբանական անձ	հատ	274
2	Վրտաքին տնտեսական գործունեության մասնակիցների թիվ	հատ	4 900
3	Պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ավարտված ստուգումների (ԲՍ) թիվ	հատ	173
4	Պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ավարտված ստուգումների (ԲՍ) արդյունքում առաջադրված գումարներ	մլն դրամ	2,489,922,593

Հ/Հ	Ցուցանիշ	Զափման միավոր	2011թ. Դեկտեմբեր
1.1	Նոր գրանցված (ՀՎՀՀ ստացած) հարկ վճարողների թիվ, այդ թվում՝ ֆիզիկական անձ	հատ	646
1.2	Իրավաբանական անձ	հատ	278
2	Վրտաքին տնտեսական գործունեության մասնակիցների թիվ	հատ	5122
3	Պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ավարտված ստուգումների (ԲՍ) թիվ	հատ	236
4	Պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ավարտված ստուգումների (ԲՍ) արդյունքում առաջադրված գումարներ	մլն դրամ	1,845,846,077

